

« Ա. մի մոռնաք դուք , յիշեցէք . կայ վերև  
 « Աղքատաց աւըն և մեծատանց դատաւոր ,  
 « Որոյ առջն ըսկայ հարուստ չըքաւոր :  
 « Ողորմեցէք տընանկ անլոյս աղքատին  
 « Որ՝ լուսի մէջ օր մի հանգչի ձեր հոգին :  
 « Զըլինի թէ անլոյս մինաք դուք անդին ,  
 « Ելանելով ի մուժ խաւարն արտաքին ,  
 « Եւ լընէք դուք . Չուր ծարաւին շը տուիք ,  
 « Մերկ , քաղցածին մի պա . առ հաց , հանդերձիկ .  
 « Ողորմեցէք տընանկ անլոյս աղքատին  
 « Որ՝ լուսի մէջ օր մի հանգչի ձեր հոգին : »  
 Մի անողորմ , խելքէ թեթեւ Մ'եծատուն  
 Ուշ զընելով օր մի սորա երգերուն  
 « Ա. յդպէս , ասաց , լըսողներուն վախ տալով ,  
 « Կարծես ժողվել ըստակ անհամ երգերով ,  
 « Քու չար սըրտիդ պատիժն առել ես արդէն  
 « Փոփան երգի , մուրա անցնող դարձողէն : »  
 Այս խօսքերէն Աշուղին սիրտը խոցուած  
 Մի լուրջ ձեռվ այս ծանր խօսքերը ասաց .  
 « Մարդ խարելու միտք չունիմ ես ,  
 « Ողորմութիւն տուր՝ թէ կ'ուզես .  
 « Կոյր լինելուս համար հարկ չէ  
 « Որ՝ դադարիմ ես երգելէ .  
 « Զէ որ կոյր էր և Հոներ .  
 « Ա. ինչ երգեր նա կ'երգէր : »

Հ. Քերոզիք Վ. Գոհենեսին

## ՈՒՂԵՐՁ

ԱՌ ՑԱՐԳԱՅԱՎԱՏԻՒ ՀԱՐՄ ՄԻՒԹԱՐԵԱՆ ՈՒԽՏԻՆ

Բարւոյն՝ վսեմին , եւ գեղակիրթ ճըշմարտին  
 Ենայ սիրահար . ես պատանի դեռ անմեղ  
 Որոշեցի լըսել զըրդմանցն իմ սըրտին ,  
 Ուր ըզգայի գեղոցն ճաշակ քաղցր համեղ :

Բայց ուտայր ինձ նոցա վայելքն հոգեսփոփ ,  
 Ուսումն եւ մարզ պատանեկիս սիրազգաց ,

Որ մըսախոհ եւ ակնապիշ սիրտ ի տրոփ,  
Զմայլէր բնութեամբ, հառաջանգը հոգեսլաց:

Ես խանդավառ իբրեւ մի հուր շըրջմոլիկ,  
Թափառէի տարտամանցոյս, անըստոյդ,  
Եռայր արիւնս իբր հողմակոծ ջուրց ալիք,  
Ցորումսիրտն իմ' էր դիւրաբեկ մի մակոցյ:

Սակայն կենացս ի հորիզոն միգամած  
Յանկարծ փայլեց գերանըշան մի վեհ լոյս.  
Որ անդրադարձ պշոցեալ յարտօսր իմ աչաց,  
Լըցուց զիմսիրտ բիւր հըրնուանգը մեծայոյս:

Եւ գըրկարաց ես առ ի լոյս գիմեցի,  
Ոյր կեղրոնն էր ճառագայթից մի տաճար.  
Դողդոյն ձեռօր դուռն հիւրասէր բաղխեցի,  
Ուր իմաստնոց պատկառելի կայր կաճառ:

Այնտեղ գըտի Մըխիթար Հայրն, Ալիշան,  
Հոմերն Հայկեան՝ Բագրատոնին ոսկեգրիչ,  
Անդ վեհն Հիւրմիւզ, Ամպէրպայ Հարք, որք նըշան  
Ուսմանց ի գլուխ կրէին ժըպտովյանկուցիչ:

Նոքա եղան նախկին քայլիցս առաջնորդ.  
Նոցա զըրեանք հարթեցին ինձ լայն շաւիղ.  
Նոքա արին վսեմին՝ բարւոյն զիս հաղորդ,  
Լարելով փոյթ սըրտիս խանդին իմ տաւիղ:

Եւ ինչ զարմանք, թէ այժմ ես ալնոյն տաւղով  
Ջիմերախտիս երգեմհամեստ, սիրագոշ,  
Օրհնեմըզձեղ Հարք երկնառաք, որ սիրով  
Մըշակեցիք հոգւոյն իմ սէր ի բողբոջ:

Ի Քաղէնոնք

Պ. Հ. Ա. Ա. Ա. Ա. Ա.